«ՇԻՆ-ՏԱԼԳ փորձագետ» ՍՊԸ
(Նախագծերի փորձաքննություն)
ԱՐՏՈՆԱԳԻՐ Հ. 15750

«02» Օգոստոսի 2013թ.

Տնօրեն՝ Գ. Գրիգորյան

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 02/13-13

ՕԲՅԵԿՏ –Քաղաք Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, «Հասարակական նշանակության կցակառույցի իրականացում Բաբաջանյան փողոց 10/4 հասցեում» նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների

Պատվիրատու՝
Սամվել Միշայի Պետրոսյան
(անձնագիր № AM 0854706)

Նախագծող՝
«Բաբայան-ԼԱՏ նախագիծ» ՍՊԸ

Նախագծման հիմքը.

1. Երևանի քաղաքապետարանի կողմից 29.04.2013թ-ին տրված №01/18-07/1-Պ-739-343 ճարտարապետահատակագծային առաջադրանքը,
2. Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 17.08.2007թ-ին տրված № 2259798 վկայականը.
3. Նախկինում համաձայնեցված նախագիծը. 24.10.2008թ-ի հ. 02/18-05/1-Պ-1643-975.
4. «Բաբայան-ԼԱՏ նախագիծ» ՍՊԸ-ի կողմից 14.09.2012թ-ին տրված թիվ 045-ԲՀ-12 մասնագիտական եզրակացությունը.

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ

Փորձաքննության է ներկայացված Երևան քաղաքի, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, հասարակական նշանակության կցակառույցի իրականացում Բաբաջանյան 10/4 հասցեում օբյեկտի աշխատանքային նախագիծը:

Աշխատանքային նախագիծը կազմված է մեկ ալբոմից, որում ներառված են.

1. Ճարտարապետաշինարարական մաս,
2. Շինարարության կազմակերպում,

Սույն փորձաքննությունը պարզաբանում է ներկայացված աշխատանքային նախագծի համապատասխանությունը ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին՝ տրամադրելով պարզ փորձաքննություն, որի եզրակացությունը ներկայացնում ենք ըստ համապատասխան մասերի (ճարտարապետաշինարարական մասի փորձաքննություն):

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ

Աշխատանքային նախագծով ներկայացված կցակառույցը իրենից ներկայացնում է մեկ հարկանի մետաղական կոնստրուկցիաներով իրականացված ծածկարան: Հիմքերը նախատեսված են միաձույլ ե/բետոնից՝ կետային հիմքեր, որոնք միմյանց հետ կապված են միաձույլ 300x600մմ (հ) հատվածքի ե/բետոնյա ժապավեններով:

Ժապավենային հիմքերի տակ նախատեսված է B10դասի բետոնե 10սմ հաստությամբ նախապատրաստական շերտ, իսկ կետային հիմքերի տակ B10դասի խամքարբետոնե նախապատրաստական շերտ՝ թումբերի տեսքով:

Միաձույլ ե/բետոնյա կետային հիմքերը ամրանավորված են Ø16A500c դասի 150x150մմ ամրանային ցանցով, իսկ ժապավենային հիմքերը Ø18A500c, Ø12A500c երկայնական և Ø8Acl լայնական ամրաններով:

Ծածկարանի սյուները նախատեսված են մետաղական խողովակներով 120x8մմ հատվածքով: Ծածկի կրող կոնստրուկցիան նախագծված է մետաղական ֆերմաների տեսքով՝ իրականացված մետաղական ուղղանկյուն հատվածքի սնամեջ խողովակներով:

Ֆերմաների վերին և ներքևի գոտիներում նախատեսված են 60x30x3մմ հատվածքի մետաղական սնամեջ խողովակներով (հորիզոնական կապեր):

Ծածկարանի ծածկույթը նախատեսված է մետաղակղմինդրից: Նրա ձախակողմյան և հետևի պատերը իրականացված են բետոնե թեթև ծակոտկեն բլոկներով, որոնք տեղադրված են մետաղական էլեմենտներից սարքված հիմնակմախքի մեջ՝ լցվածքի տեսքով, անջատված կաթաններով և չեն մասնակցում հիմնակմախքի աշխատանքներին: Դիմային ճակատի կողմից նախատեսված են բացվածքներ: Ծածկարանի ետնամասում նախատեսված է պահեստային մաս, առևտրի փոքրիկ սրահ՝ 3.70x3.65մ առանցքային չափերով, իսկ ծածկարանի տակ ներքին տարածքը ծառայում է որպես ավտոտեխսպասարկման սրահ:

ԵԶՐԱԿԱՑՈՒՄ

Ելնելով վերոգրյալից. «Շին-ՏԱԼԳ փորձագետ» ՍՊԸ-ի փորձաքննությունը ուսումնասիրելով ներկայացված աշխատանքային նախագծի ճարտարապետաշինարարական մասը նշում է.

Երևան քաղաքի, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, «Հասարակական նշանակության կցակառույցի իրականացում Բաբաջանյան փողոց հ. 10/4 հասցեում» օբյեկտի աշխատանքային նախագիծը համապատասխանում է ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին և ենթակա է այն համաձայնեցման:

Նախագծում առկա են աշխատանքային կարգի վրիպակներ և շեղումներ, որոնք անհրաժեշտ են շտկել շին. աշխատանքների կատարման ընթացքում:

Ճարտարապետ՝ Կ. Բաբաջանյան

Կոնստրուկտոր՝ Գ. Դալլաքյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

15750

(լիցենզիայի համարը)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
(ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ)

(գործունեության տեսակը)

Տրված է « 01 ՕԳՈՍՏՈՍԻ 2013թ. » «ՇԻՆ-ՏԱԼԳ ՓՈՐՁԱԳԵՏ» ՍՊԸ Ք. ԵՐԵՎԱՆ, ԱՆԴՐԱՆԻԿԻ Փ. 19 Շ , ԲՆ. 48

(լիցենզիան տալու ամսաթիվը, իրավաբանական անձի անվանումն ու գտնվելու վայրը,
իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար՝ ազգանունը, անունն ու բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

«ՇԻՆ-ՏԱԼԳ ՓՈՐՁԱԳԵՏ»
"SHIN-TALG PORDZAGET"
ՍՊԸ LLC
01257087

Կ.Տ.